

հիմնավորումներով գտնում է, որ մերժման է ենթակա նաև Հայցվորի կողմից ներկայացված ածանցյալ պահանջը՝ մատակարարված ապրանքն ընդունել պարտավորեցնելու մասին:

6. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Դատարանն արձանագրում է, որ սույն գործով Հայցվորի կողմից նախապես կատարվել է հայցադիմումի ներկայացման համար անհրաժեշտ պետական տուրքի վճարումն, իսկ հայցը մերժվում է, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Պրիմա Լաբ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ պայմանագրի լուծումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք մատակարարված ապրանքն ընդունել պարտավորեցնելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ

Ս. ԵՐԻՑՅԱՆ



Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "[Էլեկտրոնային դատավարություն](http://cabinet.armlex.am)" համակարգ՝
cabinet.armlex.am